

ՆՈՐԱՅԱՅՏ ՀՆԱԳՈՅՆ ԿՐՕՆԱԾԻՍԱԿԱՆ ԻՆՔՆԱՀՈՒՆՉ «ՁԵՌԱՑ ԶԱՆԳ»Ը

ԶԱԻԷՆ ԿՆԵԱԶԵԱՆ

zavenkniasian@yahoo.com.ar

ՄՈՒՏՔ

Հայկական աանդական երաժշտական գործիքադարանը հարուստ է իր բազմազանությամբ, բայց ինքնահունչները¹ ընդհանրապես մասնագետներուն ուշադրության առարկայ չեն դարձած: Գործիքներու այս խումբին պատկանող՝ Նոր Զուղայի կոչնակով զբաղելու ժամանակ, պատահ-մամբ, 2021ին Նոր Զուղայի մէջ բացուած Հայկական երաժշտութեան թանգարանի (ՀԵԹ) ներքին լուսանկարներու շարքին նշմարեցինք պատէն կախուած հետաքրքրական ցուցանմուշ մը: Այն կիսագնդաձեւ փոքր զանգ մըն էր, իսկ քովը զետեղուած հայերէն եւ պարսկերէն բացատրագիրին վերնագիրը պարզօրէն կարելի էր կարդալ «զանգ»: Դիմեցինք թանգարանի տնօրէնուի Զոյա Խաչատուրեանին, մանրամաստութիւններ խնդրելով²:



Ալբերտ սրկ. Ղազարեանը ձեռաց զանգը հնչեցնելու պահուն

Այսպէս կը սկսի «ձեռաց զանգ»ի յայտնագործումը եւ ասկէ յառաջացած ուսումնասիրութեան գործընթացը³: Ըստ հաւաքուած նիւթերուն, այս

¹ Ինքնահունչ = idiophone:

² Մեր շնորհակալութիւնները Նոր Զուղայի ՀԵԹ տնօրէնուի Զոյա Խաչատուրեանին իր սիրայօժար աջակցութեան համար:

³ Այս աշխատութիւնը անկարելի պիտի ըլլար առանց եղբօրս՝ Ռուբէն Կնեազեանին, որ յօդուածին բոլոր տեղեկատուներու եւ թանգարաններու հետ կապ հաստատեց նպաստելով նիւթերու որոնումին:

փոքրիկ զանգը հայկական կրօնաճիսական նուագարան մըն է, որուն գործածութիւնը գոյատեւած է միայն պարսկահայոց մէջ:

Գործիքը մետաղէ կիսագունդ մըն է, տրամագիծը ընդհանրապէս 10 սմ., ձախ ձեռքին բռնելով՝ զայն կը հարուածեն աջ ձեռքի մետաղէ ձողով մը: «Ձեռաց զանգ»ի մասին կ'օգտագործենք «յայտնագործում» բառը, որովհետեւ ոչ մէկ մասնագէտ - հայ թէ օտար - այս գործիքը նշած է որեւէ ուսումնասիրութեան մէջ: Ան բացակայ է հայկական աւանդական նուագարաններու ցանկերուն մէջ՝ երաժշտական պարզ դասագիրքեր, թէ՛ հանրագիտարաններ, թէ՛ պարսկահայերու համար առօրեայ գործածական աւանդական ժառանգութեան մաս կը կազմէ մինչեւ այսօր:

ԱՆՈՒԱՆՈՒՄՆԵՐ

Հին ժամանակ այս գործիքները մասնաւոր անուն չեն ունեցած, պարզապէս կ'օգտագործէին «զանգ» կամ «զանգակ» բառաձեւերը: Այս հաստատումը կը բխի գործիքներուն վրայ եղած արձանագրութիւններէն: Այս զանգերը կը նշէ միայն հայր Մաղաքիա Օրմանեան իր *Ծիսական բառարանի* «զանգակ» բառ/յօդուածին մէջ. «*Ծանօթ ծայնական գործիք զանգան մեծութիւններով, **ամենէն մանրներէն՝ որ ձեռքի վրայ կը գործածուին՝ մինչեւ մեծամեծները որ անշարժ կը մնան***»⁴:

Բայց այլ է պարսկահայերու քով, ուր թէ՛ Նոր Զուլայի, թէ՛ Փերիոյ⁵ հայերու մէջ տարածուած են «**ձեռաց զանգ**», «**փոքր զանգ**» եւ «**թափուրի զանգ**» բառաձեւերը: Այս անունները գործածական են ներկայիս եկեղեցականներու, ինչպէս նաեւ պարզ ժողովուրդին կողմէ: Առօրեայ խօսակցական լեզուի պարագային պարզ «**զանգ**» ձեւն ալ գործածական է:

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՆՄՈՒՇՆԵՐ

«Ձեռաց զանգ»եր պահպանուած են թանգարաններու մէջ: Անոնց ինքնութիւնը անձանօթ ըլլալուն՝ արձանագրուած են իբրեւ խնկաման, երգեհոն, զանգ, եւն.: Կրցանք ինը օրինակ ցուցակագրել.- 1ը՝ Նոր Զուլայի Հայկական երաժշտութեան, 5ը՝ Հայաստանի Պատմութեան, 2ը՝ Ռուսիի Ս. Աստուածածին եկեղեցոյ, եւ 1ը՝ Կապանի Երկրագիտական թանգարաններուն մէջ: Մեծամասնութիւնը ունի հայերէն արձանագրութիւն: Վերո

⁴ Մաղաքիա արք. Օրմանեան, *Ծիսական բառարան*, տպ. կաթողիկոսութեան մեծի տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, Լիբանան, 1957, էջ 117:

⁵ Փերիոյ գաւառը ատենին եղած է Իրանի ամենաշատ հայաբնակ շրջանը: Ան 1990ականներուն հայաթափուեցաւ: Ոմանք գաղթեցին մեծ քաղաքներ, ոմանք՝ արտասահման: Գաւառը 1965ին ունէր 17 հայկական գիւղ, 10,365 բնակիչներով: Իսկ 2003ին Փերիոյ գաւառի միակ հայաբնակ գիւղը Բոլորանն էր, ուր տակաւին կը կենցաղավարուէր «ձեռաց զանգ»ը:

յիշեալ հաստատութիւնները իրենց սիրայօժար ընդառաջացին մեր դիմումներուն, նաեւ անհրաժեշտ լուսանկարներ տրամադրեցին մեզի:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԹԱՆԳԱՐԱՆ

Ձեռաց զանգի առաջին օրինակը կը գտնուի Նոր Զուղայի Հերթի մէջ: Յուցադրուած է ուրիշ եկեղեցական ինքնահունչներու հետ (քշոց, կոչնակ եւն.):

Տրամագիծը՝ 11 սմ է, բարձրութիւնը՝ 8 սմ: Արձանագրութիւն՝

«Ձանգս ետու յիշատակ Պետրոսի որդի Գրիգորս, ի վայելումն իմ յեկեղեցուն (կամ՝ իմոյ եկեղեցուն) Շուրջկանա: Աւետ ամսին»

Գագաթը անցք ունի պարանի համար, որ կաշիէ երիզ մըն է: Նախատեսուած է Փերիոյ Շուրջկան գիւղի եկեղեցոյ համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԹԱՆԳԱՐԱՆ

ՀՊԹՆ ունի «ձեռաց զանգեր»ու հետաքրքրական հաւաքածոյ մը բաղկացած 5 օրինակներէ, որոնցմէ 3ը ունին յիշատակագրութիւններ

ՀՊԹ Ա-2651


Այս օրինակին արտադրման վայրը Թոքաթ քաղաքն է, ԺԶ. դարուն: Մետաղը պրոնզ է, տրամագիծը՝ 9,5 սմ, բարձրութիւնը՝ 3 սմ: Գագաթը անցք ունի պարանի համար:

ՀՊԹ փոխանցուած է Հնութիւններու պահպանութեան կոմիտէէն, 1932ին:

ՀՊԹ Ա-2652

Այս օրինակին արտադրման վայրն ալ Թոքաթ քաղաքն է, 1729ին. մետաղը՝ պղինձ: Տրամագիծը՝ 9 սմ եւ բարձրութիւնը՝ 3,5 սմ է:

Արձանագրութիւն՝ **«Յ(ի)շ(ա)տ(ա)կ է Աթանեսի որդի Նարին ի դ(ու)ն ս(ուր)բ Ըստեփանոսու թվ(ին) ՌՃՀԸ»**



زنگ

زنگ از

به یکدیگر

که نوازنده

کاسه ضربه

به محله به

(عید پاک)

برای تقدیه

نواخته می

ը կաշւէ

մնակա-

սցնելով

նօրինէ-

նէքի եւ

ն հետ,

ՀՊԹ փոխանցուած է Էջմիածինի թանգարանէն, 1931ին: Գազաթի անցքին տեղը զօդուած է, շատ լաւ կը նշմարուի ելուտը, որ հաւանաբար բռնելու ծող մը ըլլար⁶:

ՀՊԹ Ա-2659

Արտադրուած է Մուշի մէջ, ԺԸ. դարուն, մետաղը՝ պրոնզ: Տրամագիծը՝ 10 սմ եւ բարձրութիւնը 5 սմ է: Արձանագրութիւն՝ **«Յ(ի)շ(ա)տ(ա)կ է մղտսի Պարսամին»**: Գազաթը անցք ունի պարանի համար:

ՀՊԹ փոխանցուած է Էջմիածինի թանգարանէն, 1931ին:

ՀՊԹ Ա-11543/34

Արտադրուած է Նոր Զուղայի մէջ, Ա. Աստուածածին եկեղեցի: Պատրաստուած է ԺԸ. դարուն, նիւթը պղինձ է: Ունի նոյն նիւթէ բռնակ մը որ կ'աւարտի կախելու յարմարանքով:

Բարձրութիւնը՝ 5 սմ, տրամագիծը՝ 12 սմ: Նուէր՝ Աւօ Յովհաննիսեանի կողմէ, 1996ին:

ՀՊԹ Ա-2663

Արտադրուած է Վասպուրականի Մոկս գաւառի Ա. Յակոբայ վանքին համար 1836ին: Նիւթը պղինձ է, ունի նոյն նիւթէն բռնակ մը: Տրամագիծը՝ 12 սմ, բարձրութիւնը՝ 5 սմ: Արձանագրութիւն՝ **«Յիշատակ է զանգակս Ռադակեսեան Սիմօնին եւ կողակցոյ նորա Թամամին զոր ետուն հրաշալի վանին Սրբոյն Յակոբայ ի 1836 մայ(ի)սի 17»**:

ՀՊԹ փոխանցուած է Էջմիածինի թանգարանէն, 1931ին:



© Հայաստանի Պատմութեան Թանգարան


⁶ Մեր շնորհակալութիւնը ՀՊԹ տնօրէնութեան, որ այս աշխատութեան համար տրամադրեց անհրաժեշտ տեղեկութիւններ եւ խնդրոյ առարկայ ցուցանմունքներու լուսանկարները: Մասնատրապէս մեր երախտագիտութիւնը թանգարանի ազգագրութեան բաժնի պղնձի ֆոնդի ֆոնդապահ-գիտաշխատող, 1997-2021՝ ազգագրութեան բաժնի վարիչ Մարետա Կիրակոսեանին որ մեր անմիջական կապը եղաւ եւ փոխանցեց անգնահատելի տեղեկութիւններ:



© Հայաստանի Պատմության Թանգարան

ԿԱՊԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ

Թանգարանային օրինակը կը գտնուի ԿԵԹԻ մէջ: 2011ին, Արման Նալբանդեանի կատարած պեղումներու ժամանակ յայտնաբերուած է ձեռաց զանգի այս օրինակը: Ան գտնուած է Կապանի ենթատարածքի Շիկահող գիւղի Ս. Ստեփանոս Նախավկայի եկեղեցոյ հարաւային աւանդատան արեւելեան եզրին մօտ, ընդամենը 6 սմ խորութենէ: Յայտնաբերուած այս պրոնզէ ձեռաց զանգը իր վրայ ունի միատող արձանագրութիւն՝ **ՈՍԿԱՆԻ ՈՐԴԻ ՂՈՆՃԱՅ:**



Այս նմուշը ունի ճեղք, բերանի բացուածքը 9 սմ, բարձրութիւնը 4 սմ:

ԿԵԹ հիմնական հաշուառանիշ՝ Մ-8038 բաժնեհաշուառանիշ՝ Հ-1773: Գազաթը անցը ունի պարանի համար⁷:

⁷ Մեր շնորհակալութիւնը՝ ԿԵԹին, մասնատրապէս Քրիստինէ Պետրոսեանին որ այս աշխատութեան համար տրամադրեց անհրաժեշտ տեղեկութիւններ եւ խնդրոյ առարկայ ցուցանմովին լուսանկարները:

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՆՄՈՒՇՆԵՐ

Պուլկարիոյ՝ Ռուսէ քաղաքի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ թանգարանին մէջ պահպանուած են ձեռաց զանգի երկու օրինակներ: Այս նմուշները պատրաստուած են պրոնզէ եւ ունին բուն զանգին ամրացուած բռնելու կոթ: Երկուքն ալ ունին արձանագրութիւն ուր նշուած է պատրաստութեան թուականը: Արձանագրութիւններէն կարելի է ենթադրել որ երկուքն ալ պատրաստուած են նոյն քաղաքը ապրող վարպետ պղնձագործի մը ձեռքով Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ համար⁸:



1.- Գծաւոր զանգ

Այս օրինակը ունի զուգահեռ գիծեր զարդի համար, իսկ գագաթին ամրացուած է մետաղեայ բռնելու կոթ: Զանգի բերանին մօտ կայ հետեւեալ արձանագրութիւնը՝ « ... ՅԻՇԱՏԱԿ Է ԽԱՉԻԿՕՂԼԻ ՊԱՊԻԿԻ ՈՐԴԻ ԿԱՐԱՊԵՏԻՆ ՍԲ ԱԾԱԾ ՄԱՐ ԺԱՄԷՆԱՅ ԹՎԻՆ ՌՄԿԵՒՆ [1265/ 1816]

2.- Ողորկ զանգ

Երկրորդ օրինակի մակերեսային բոլորովին ողորկ է, նախորդին պէս գագաթին ամրացուած է մետաղէ բռնակ: Զանգի բերանի մօտ կայ հետեւեալ արձանագրութիւնը՝ «ՅՇԿԷ ԽԱՉԱՏՈՒՐԻ Ի ԴՈՒՆ ՍԲ ԱԾԱԾՆ ԹՎ ՌԾՀԳ» [1173/1724]:

ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՎԱԽԵՐԱԳԻՐԵՐ

Եթէ մէկ կողմէն ճիշտ է որ ընդհանրապէս հայ մատենագրութեան մէջ նշոյլ մ'իսկ չկայ ձեռաց զանգի մասին, միւս կողմէ ունինք բազմազան պատկերագրութիւն:

⁸ Շնորհակալ ենք Ռուսիի հոգեւոր հովիւ Տիրայր քինյ. Հատաւեանին, որ տրամադրեց անհրաժեշտ լուսանկարները եւ այլ մանրամասութիւններ:

Նկարիչ Սմբատ Տէր Կիրեղեան

Փոքր զանգերու գործածութիւնը կը հաւաստեն նշանաւոր նորջողայեցի նկարիչ Սմբատ Տէր Կիրեղեանի (1913-1999) երեք ջրանկարները: Այս երեք նկարներուն վրայ յստակ կը տեսնուին վերոյիշեալ զանգերը՝ փոքրիկ երեխաներու ձեռքը, հարսանեկան թափօրի ընթացքին, ճիշտ թմբուկ-զուռնայի եւ ծխատէր քահանային միջեւ:



Արմէն Տէր Կիրեղեանի ուղարկած լուսանկարը: Փերիա 1959/60, հարսանեաց թափօր, «ձեռաց զանգ»ով



Աւելի տեղեկութիւններ գտնելու նպատակով եղբայրս դիմեց նկարիչին որդւոյն, որ 17 տարեկանէն Սան Ֆրանսիսքօ (ԱՄՆ) տեղափոխուած է: Զրանկարները հայրը նկարած է հիմնուելով 1960էն առաջ իր կողմէ իրականացուած լուսանկարի մը վրայ: Այդ լուսանկարը, որ գիւղական միջավայրի մէջ (Փերիա)՝ հարսանիքի ժամանակ կատարուած է, Արմէն սիրալոյսով մեզի դրկեց: Այս լուսանկարը վաւերագրական գերազանց արժէք կը ներկայացնէ:

«Սա նորէն մի գիտում է, ոչ՝ Նոր Զուղայում: Հաւանաբար այս լուսանկարը հայրս լուսանկարել է 1960ից առաջ: Ձեր կից արած ջրաներկները ինքը շար աւելի ուշ է նկարել (1984ին), բայց իրական հարսանիքը 1960ից աւելի շուր պիտի եղած լինի»⁹:

Խոյզան գիւղ 1980, քահանային ձախ կողմը երեխայ մը «ձեռաց զանգ»ը հնչեցնելու պահուն, աջ կողմը քաւորը նորածինը գրկած¹⁰:

ՍԱՐԿԱԻԱԳՆԵՐՈՒ ՊԱՏԿԱՆՈՂ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ձեռաց զանգերու գործածութիւնը ի զօրու է ներկայիս, բայց զգալի է որ անոնց գործածութիւնը նուազած է անցեալի համեմատութեամբ: Նկատի ունենալով որ գործածութեան նուազումը տեղի ունեցած է վերջին քանի մը տասնամեակներուն, զարմանալի չէ որ գրեթէ բոլոր քահանաներուն եւ սարկաւագներուն քով պահպանուած ըլլան այս գործիքներու օրինակներ: Կրցանք ցուցակագրել հետեւեալ օրինակները որոշ տուեալներով:



Ալբերդ սարկաւագ Ղազարեան¹¹ (1)

Ունի արձանագրութիւն՝ «Յիշատակ է Յովաննէսին ԹՎ ՌՃԿԳ (1714)» եւ մաս մը դեռ չվերծանուած:

Գագաթը անցք ունի պարանի համար: Պարանը գոյնզգոյն հիւսուած է, կը գերակշռէ կապոյտ գոյնը: Չափերը՝ տրամագիծ 9 սմ, բարձրութիւն 3 սմ, թակիչի երկարութիւնը 11 սմ:

Ալբերդ սարկաւագ Ղազարեան (2)

Գրութիւն չունի:

Գագաթը անցք ունի պարանի համար: Պարանը հիւսուած կանեփի է:

Չափերը՝ տրամագիծ 9 սմ, բարձրթն. 3 սմ, թակիչի երկարութիւնը 9 սմ:

⁹ Արմէն Տէր Կիրեղեանի նամակէն, Փետրուար 2022:

¹⁰ Աղբիւր Աննիկ Իսաղուպեան (Իրան):

¹¹ Ծնած է Նոր Զուղա 1974ին, բայց մեծցած Փերիա գաւառի Ղալամելիք գիւղը, արմատներով այդ գիւղէն է: Նոր Զուղայի Ս. Յովհաննէս Մկրտիչ կամ Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ սարկաւագն է: Իր սպասարկութեան մաս կը կազմեն Ս. Կուսանաց վանքը եւ Ս. Նիկողայոս եկեղեցին:

Արմեն սարկաւագ Բաղումեան¹²

Ս. Աստուածաձին եկեղեցի:

Գագաթը անցք ունի զարդարուած բռնակ/օղակով պարանի համար:

Պարանը կաշիէ երիզ մըն է:




Փերիայի Բոլորան գիւղ¹³

Փերիայի շրջանի Բոլորան գիւղի՝ Ս. Ղուկաս եկեղեցի:

Սարկաւագ Սագոյի¹⁴

Գագաթը անցք ունի ուր տեղաւորուծ է մետաղէ բռնակ-օղակ մը:



Սամսոն սարկ. Զարգարեան (1)

Սամսոն սարկ. Զարգարեանը ծնած է 10 Յուլիս 1931ին, Փերիա գաւառի Սանգիբարան գիւղը¹⁵, մահացած Հոկտեմբեր 2022ին: Ծնած ըլլալով հոգեւորականի ընտանիքի մէջ¹⁶ իր վկայութիւնները շատ արժէքաւոր են եւ ճշգրիտ: Ըստ վկայութիւններու՝ տարիներ առաջ ինք կը պատրաստէր «ձեռաց զանգեր»¹⁷: Իր քով երկու օրինակներ ունէր, երկուքն ալ ինք պատրաստած:

¹² Ծնած է Նոր Զուղա, 1983ին:

¹³ Տուեալները մեզի տրամադրեց Զանիկ Թահմազեան (Իրան):

¹⁴ Սարգիս Երան (սարկաւագ Սագո) – ծնեալ 6 Հոկտեմբեր 1999ին, Էջմիածին, Ս. Գրիգոր լուսատրիչ եկեղեցւոյ սարկաւագ:

¹⁵ Անձնական տեղեկութիւնները տրամադրեց Տ. Յովհաննէս աւագ քահանայ Զարգարեանի թոռնուհին՝ տիկ. Մարիամ Զարգարեանը:

¹⁶ Հայրը՝ Տ. Յովհաննէս աւագ քահանայ Զարգարեան, ծն. 1907ին Սանգիբարան գիւղը: Քահանայ ձեռնադրուած է Նոր Զուղա, 18 Մայիս 1947ին: Վախճանած է 9 Յուլիս 2000ին, 93 տարեկանին:

¹⁷ «Ձեռաց զանգ» անուանումը վկայեց տեղեկատու Սամսոն սարկ. Զարգարեանը:

Իր «ձեռաց զանգ»երէն առաջին օրինակը մեծ չափեր ունի՝ տրամագիծը 15 սմ, բարձրութիւնը 10 սմ, պարանի երկարութիւնը 59 սմ, թակիչի երկարութիւնը 15 սմ, բռնակի երկարութիւնը 8 սմ¹⁸:



Սամսոն սրկ. Զարգարեան (2)

Փոքր օրինակի տրամագիծը՝ 7.5 սմ, բարձրութիւնը՝ 5.7 սմ, պարանի երկարութիւնը՝ 24 սմ, թակիչին՝ 8 սմ, բռնակին՝ 2 սմ:

ՏԱՐԱԾՈՒՄ

Ձեռաց զանգի մասին չենք հանդիպած հայ մատենագրութեան մէջ, բացի Օրմանեանի վերոյիշեալ յիշատակումէն եւ Պարսկաստան տպուած քանի մը նոր հրատարակութիւններէ: Ուստի դժուար է մատնանշել այս զանգերու տարածման շրջանները: Բարեբախտաբար մեզի օգնութեան կը հասնին ձեռաց զանգերու վրայ եղած արձանագրութիւնները, որոնք իրօրինակ յիշատակարաններ են: Թանգարանային նմուշները ցոյց կու տան, որ ձեռաց զանգեր պատրաստուած են եւ անշուշտ գործածուած՝ Վասպուրական, Մուշ, Թոքթաթ, Սիւնիք եւ այլ տեղեր: Այս տարածման շրջաններու բազմազանութիւնը մեզի կ'արտօնէ հաստատել, որ գործիքը ունեցած է համահայկական գործածութիւն: Ժամանակին, տակաւ, ամէն տեղ դադրած է գործածուելէ, յարատեւելով կղզիացած հայօճախի՝ պարսկահայերու քով: Նման այլ երեւոյթի մը կը հանդիպինք Պոլսոյ մէջ, ուր յարատեւած է ծնծղաներու գործածութիւնը եկեղեցական արարողութիւններուն ընթացքին: Ծնծղաները ներկայիս լայնօրէն գործածական են Պոլսոյ բոլոր եկեղեցիներուն մէջ, մինչ չեն գործածուիր այլուր:

ԳՈՐԾԱԾՄԱՆ ԱՌԻԹՆԵՐ

Այս գործիքը գործածական է/էր գրեթէ մինչեւ վերջերս պարսկահայերու, մանաւանդ նորջուղայեցիներու եւ փերիահայերու քով: «Ձեռաց զանգ»եր ունին Նոր Զուլայի բոլոր քահանաները եւ սարկաւագները, որոնք նախատեսուած են գործածուելու հետեւեալ առիթներուն.-

¹⁸ Հարցազրոյցը վարեց, տուեալները հաւաքեց եւ մեզի փոխանցեց Անուշ Էստիկ Յովհաննիսեանը որուն կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը:



- ա) Ծնունդի տնօրհնէքին
- բ) Զատիկի տնօրհնէքին
- գ) Հարսանեկան թափօրին
- դ) Կնունքի արարողութեան եւ թափօրին

Ծնունդին քահանաները կ'այցելէն հաւատացեալներուն տուները զանոնք օրհնելու նպատակով: Տարիներ առաջ երբ քահանան կը մօտենար նշանակուած տան, քանի մը փողոց առաջ իրեն ընկերակցող տիրացուն կը սկսէր հնչեցնել ձեռքի զանգը: Այս զնգզնգոցը բոլոր թաղին կը տեղեկացնէր որ տնօրհնէք տեղի պիտի ունենայ: Տան մէջ փոքր զանգը կը հնչեցնէին օրուան շարականը երգելու ժամանակ ինչպէս նաեւ «Ամէն. Ալելուիա»ի ընթացքին: Ձեռաց զանգը կը հնչեցնեն թակիչով ետեւ-ետեւի զարնելով կիսագնդաձեւ մասը, շարականներու սկիզբէն մինչեւ վերջ, անշուշտ հետեւելով երգի կշռոյթին: Ընդհանրացած է որ տան մէջ, քահանան ձեռաց զանգը տայ ընտանիքի փոքր զաւկին, իսկ երեխայ չըլլալուն՝ տանտիրոջ կամ որեւէ տղամարդու:

Նոյնը կը պատահէր Զատիկի տնօրհնէքին:

Ներկայիս, Նոր Զուղայի այն փողոցները ուր առաջ միայն հայեր կը բնակէին շատցած են պարսիկները, ռուսի եւ տնօրհնէքին, սարկաագները այլեւս փողոցները չեն հնչեցնէր զանգերը: Նոյնը կը պատահի հարսանիքներուն եւ կնունքի թափօրներուն, ուր զանգը գրեթէ չեն գործածեր:



Նոր Զուղա, Ձեռաց զանգեր կնունքի արարողութեան ընթացքին 1980ականներ¹⁹

¹⁹ Աղբիւր՝ Իշխան Զարգարեան (ԱՄՆ):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

«Ձեռաց զանգ»երը մեր խոր անցեալի վերապրուկներ ըլլալով, գոյատեւելու համար պէտք ունին պատասխանատու մարմիններէն որոշ հոգատարութեան: Ամենամեծ վնասը անտարբերութիւնն է՝ որ իր կարգին անգիտութենէ յառաջացած երեւոյթ մըն է:

Շատ անգամ Իրան կը նշանակուին բարձրաստիճան եկեղեցականներ, որոնք իրենց ուսումը առած են այլ վայրեր, յետոյ ծառայած են այլ հայօճախներու մէջ, ուրեմն գիտակից են որ «ձեռաց զանգ»երը հայաշխարհի ներկայիս ընդունուած կրօնական կարգ ու կանոնէն դուրս են: Բայց միաժամանակ գիտեն որ տեղական երեւոյթ է, որ կարելի է հանդուրժել, որովհետեւ շատ մեծ շեղում մը չէ կրօնական ծիսակարգէն: Ուրեմն կը գոյնայ այն համոզումը՝ թէ ի՛նչ պատահի այս փոքր զանգերուն, կարելորութիւն չունի:

Այս աշխատասիրութիւնը ապացոյց մըն է այս գործիքին պատմական կարելորութեան եւ յուսանք՝ կը նպաստէ այն գաղափարի զարգացման թէ ձեռաց զանգը կ'արժէ պահպանել, գործածութիւնը խրախուսել եւ դարեր գոյատեւած այս մասունքը ժառանգել ապագայ սերունդներուն:

THE NEWLY DISCOVERED ANCIENT IDIOPHONE FOR RITUAL-RELIGIOUS USE: THE "DZERATS ZANG" (SUMMARY)

ZAVEN KNIASIAN
zavenkniasian@yahoo.com.ar

The “**dzerats zang**” is an idiophone for ritual-religious use. It is a small hemispherical metal bell with an average diameter of 10 cm. and a height of 5 cm.

We are talking about “discovery” since no specialist in the subject has mentioned them; they are not even mentioned in the lists of traditional instruments, nor among those of ecclesiastical use.

The “**dzerats zang**” is currently widespread among the Armenians of Nor Djughha (Isfahan) and the Peria (Fereydan) region. Analyzing the specimens preserved in museums, we see that they come from places as different as Mush, Vaspuragan, Syunik, etc., which gives us reason to assume that in the recent past the instrument was in use in all regions of historical Armenia and areas of large Armenian population. Over time they fell out of use and survived only among the Armenians of Iran.

This instrument is used in the Blessing of Homes ceremonies (Christmas and Easter), and Baptism and Wedding processions. Its use is in force today, but there is a danger that it will be abandoned due to various circumstances.